ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 2-ին, ուրբաթ.—Այսօր հոգեվոր ճեմարանի հանդիսությունների սրահում, ժամը 17-ին, տեղի է ունենում մի շատ հետաքրքիր դասախոսություն: «Կոմիտաս վարդապետի նորահայտ երգերը և Կոմիտասը որպես մանկավարժ» թեմայով դասախոսություն է կարդում Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի վաստակավոր դասախոս, պրոֆ. Ռ. Աթայանը:

Դասախոսությանը ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, ինչպես նաև մայրավանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ:

Դասախոսության ընթացքում Կոմիտաս վարդապետի նորահայտ երգերի կատարմամբ հանդես է գալիս Երևանի Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցի երկսեռ երգչախումբը:

Շատ հաճելի էր ունկնդրությունը «Ամեն հայի սրտից բխած» Հայրապետական մաղթերգի կոմիտասյան երկու մշակումների:

Դասախոսության ավարտին հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարությանը, հանուն Հայոց Հայրապետի և բոլոր ներկաների, ջերմ շնորհակալություն հայտնեց հարգելի դասախոսին՝ նրա բովանդակալից բանախոսության, ինչպես նաև երգչախմբին՝ նրա շնորհալիորեն կատարած երգերի համար:

* * *

Նույն օրը Մայր Աթոռ է վերադառնում Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ տ. Նարեկ վրդ. Շաքարյանը, որը շուրջ մեկ ամիս հովվական այցելությամբ գտնվում էր Բուենոս-Այրեսում:

* * *

Փետրվարի 4-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Ծննդեան.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Բագրատ աբղ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Մեք քարոզեսցուք զխաչեցեալն Քրիստոս, հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն» (Ա Կորնթ. Ա 23) բնաբանով:

* * *

Նույն օրը ս. Հռիփսիմե տաճարում ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և կատարում քահանայական ձեռնադրություն: Նորընծան կոչվում է տ. Ղուկաս քահանա: Ձեռնադրությունից հետո սրբազանը քարոզում է «Քրիստոս է իմ Աստուած» բնաբանով:

ՀԱՅԿ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

*
* *

Փետրվարի 9-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանում, հայրապետական վիլլայում, Հայոց Հայրապետի նախագահությամբ գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում կազմվում է հոբելյանական մի հանձնախումբ՝ այս տարի ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակը արժանավորապես նշելու համար, այս առթիվ գրված հունվար 16 թվակիր սրբատառ հայրապետական կոնդակի հրահանգով:

Հանձնախմբի անդամներ են ընտրվում պրոֆ. Առաքել Առաքելյանը, տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը, տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը, Արթուն Հատիտյանը և Պարգև Շահբազյանը:

*
* *

Փետրվարի 11-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Տիրան աբղ. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Առ զխաչն և եկ զկնի իմ» (Մարկ. Ը 21) բնաբանով:

*
* *

Փետրվարի 13-ին, երեքշաբթի.—Նախատոնակ Տեառնընդառաջի.

Այսօր երեկոյան Մայր տաճարում կատարվում է երեկոյան ժամերգություն, ապա Տյառնընդառաջի նախատոնակը և սահմանված Անդաստանը:

Տոնի ուրախ առիթով հանդիսավորապես Մայր տաճար է իջնում Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան արարողություններից հետո, ժամը 20-ին, հոգևոր ճեմարանի մարզահրապարակում Վեհափառ Հայրապետը վառում է ավանդական դարձած Տյառնընդառաջի խարույկը՝ Մայր Աթոռի միաբանության, հոգևոր ճեմարանի դասախոսների և ուսանողության ներկայությամբ:

Մինչև գիշերվա ժամը 22-ը ճեմարանի ուսանողությունը ուրախանում է և երգում խարույկի շուրջ:

Ժամը 19-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իրեն սեղանակից դարձնել, օրվա տոնի ուրախ առիթով, Մայր Աթոռի միաբանությանն ու հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին:

*
* *

Փետրվարի 14-ին, չորեքշաբթի.—Տեառնընդառաջ. Տօն քառասնօրեայ գալստեան Քրիստոսի ի տաճարն.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

*
* *

Փետրվարի 16-ին, ուրբաթ.—Այսօր, առավոտյան ժամը 10-ին, հոգևոր ճեմարանի ուսանողությունը, փոխ-տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանի գլխավորությամբ և դասախոսական կազմի մասնակցությամբ, երկօրյա պտույտի է մեկնում Ծաղկաձոր:

Ծաղկաձորում ուսանողությունը հաճելիորեն անցկացնում է ձմեռային իր հանգիստը բնության ծոցում՝ ձյան վրա զբաղվելով սպորտի բազում ձևերով և ապա այցելելով Կեչառիսի պատմական վանքերը:

*
* *

Փետրվարի 18-ին, կիրակի.—Զ կիրակի զկնի Ծննդեան.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը և քարոզում «Ի բաց արասցուք այսուհետև զգործս խաւարի և զգեցցուք զզէնս լուսոյ» (Հռոմ. ԺԳ 12) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը: